ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆ-3102, ԳՅՈՒՄՐԻ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ. 96, ՀԵՌԱԽՈՍ՝ (0312) 50622

JOURNALISTS' CLUB "ASPAREZ"
NON-GOVERNMENTAL ORGANIZATION
POUSHKIN STREET 96, GYUMRI, ARMENIA 3102, TEL: (0312) 50622
Email: asparezirava ban@gmail.com; http://www.asparez.am http://www.publicdata.am

30 հոկտեմբերի, 2017 թ.

Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանին

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի իրավախորհրդատու Արինա Մեծոյանից

Բողոք

Հարգելի պարոն մարզպետ,

2017 թ. մայիսի 25-ին, հետազոտություն կատարելու համար տեղեկության գրավոր հարցում եմ հղել Վայոց ձոր մարզի մի քանի դպրոցների տնօրեններին, խնդրելով մի շարք տեղեկություններ, որ իրենք տնօրինում են:

Չնայած «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ տեղեկություն տնօրինողը տեղեկությունն որոնողին դրանք պիտի տրամադրի հարցումն ստանալուց հետո առավելագույնը 30-օրյա ժամկետում, մինչ օրս վերոհիշյալ դպրոցների տնօրենները իմ հարցմանը չեն պատասխանել: Նրանցից ոմանք հիշեցման իմ զանգերին ի պատասխան խոստացել են տրամադրել հարցված տեղեկությունները, սակայն չեն տրամադրել:

Մինչեւ տեղեկություն ստանալու համար դատարան դիմելը, դիմում եմ Ձեզ: Այս բողոքը խնդրում եմ ընդունել ի գիտություն եւ հանձնարարել համապատասխան մասնագետներին՝ հորդորել դպրոցների տնօրեններին՝ սեղմ ժամկետում պատասխանել տեղեկության հարցումներին:

Կից ուղարկում եմ Ձեր ղեկավարած մարզի՝ հարցումներին չպատասխանած եւ տեղեկություններ չտրամադրած դպրոցների ցանկը եւ նրանց ուղարկված հարցման օրինակը:

Հարգանքներով՝

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի իրավախորհրդատու

Արինա Մեծոյան _____

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄՍՐԶ
Մուտքի թիվ 6509
03.11.2017

Վայոց ձորի մարզ

1. Եղեգնաձորի ավագ դպրոց
2. Շատինի միջնակարգ դպրոց
3. Հորսի հիմնական դպրոց
4. Արենիի միջնակարգ դպրոց
5. Սերսի միջնակարգ դպրոց
6. Գողթանիկի հիմնական դպրոց
7. Մարտիրոսի միջնակարգ դպրոց
8. Արինի միջնակարգ դպրոց
9. Ջերմուկի ավագ դպրոց